

Ազգային ժողովի ընդունելությանը նրանում Վեհափառ Հայրապետը ներկայացրեց իր հյուրին և անդրադարձավ Նրա գալստյան նպատակին: Ապա պրն. Բաբկեն Արարքյանը ողջույնի խոսքով դիմեց Գեր. Տ. Սամիր Բաֆիրին: Նա Անգլիկան Եկեղեցու պաղեստինցի բարձրաստիճան հոգևորականի այցը Հայաստան նկատեց իբրև հայ և պաղեստինցի ժողովուրդների միջև եղբայրական դրսևորումների արտահայտություն:

Պատասխան խոսքում Գեր. Տ. Սամիր Բաֆիրին ողջունեց Հայաստանի Հանրապետության անկախությունն ու վերածնունդը և պետության ու Եկեղեցու միմյանց մեջուկ լինելու կամքը:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը Սամիր Բաֆիրի եպիսկոպոսի հետ այցելեց Մատենադարան: Այստեղ Մատենադարանի տնօրեն պրն. Սեն Արևշատյանը Վեհափառ Հայրապետի հյուրին համառոտակի ծանոթացրեց Մատենադարանում պահվող ինչպես հայերեն, այնպես էլ օտար լեզուներով ձեռագրերին:

Երեկոյան Մայր Տաճարում տեղի ունեցավ ողջերթի արարողություն, որից հետո Սամիր Բաֆիրին մեկնեց Հայաստանից:

ԱՐՇԵՆ ԱՐԵՂԱ ՍԱՆՈՍՅԱՆ

Վերադարձից երկու օր անց Մայր Աթոռում ստացվեց Գեր. Տ. Սամիր Բաֆիրի ընդարձակ հեռագիրը, որը զետեղում ենք ստորև ամբողջությամբ.

«Այս պատմությունը կամխագուշակելի չէ, որովհետև այն ուղղակիորեն մեզ համար սահմանված մի բան չէ»:

Սա մի քաղվածք է Նորին Սրբություն Գարեգին Ա-ի խոսքից՝ ասված Նյու Յորքի Փրինսեթոն ակումբում 1990 թվականի մայիսի 18-ին: Այս գաղափարը Վեհափառ Հայրապետի հիշողության մեջ խորապես արմատավորվել է դեռևս 1975 թվականին, երբ կատարվում էր Մեն եղեռնի հիշատակության վաթսուներորդ տարելիցը:

301 թվականին Հայաստանում քրիստոնեությունը հռչակվեց պետական կրոն: Վերցնելով խաչը և հետևելով Տեր Հիսուս Քրիստոսին՝ դուք իբրև ազգ և իբրև Եկեղեցի կամավոր կերպով հետևեցիք «տառապանքի ճամպարին»:

Այդպիսով մարտիրոսությունը դարձավ ձեր հավատքի ուղեմիջ:

Աստծո Եկեղեցին հաճախ սահմանվել է իբրև.

1. Համախմբում, ժողովք՝ կոչված Աստծո կողմից,
2. Եղբայրակցություն՝ կոչված ընկերակցության և բաժնեկցության համար,
3. Պատարագ՝ կոչված երկրպագության և աղոթքի համար,
4. Սարկավագություն՝ կոչված ծառայության՝ միմյանց ուղեքերը լվանալու համար,
5. Մարտիրոսություն՝ կոչված զոհաբերության, տառապանքի և հաճում հավատքի նահատակվելու համար:

Հայ ազգը իր պատմության ընթացքին ցուցաբերել է նորկտակարանյան

Եկեղեցու թուրդ այս Ռինգ հատկանիշները, և անկասկած դրա շնորհիվ իր հավատքը արժանացել է մարտիրոսության՝ արյամ վկայության պսակին... Դրանով հանդերձ՝ ղուք պահել եք մեր հավատքի մաքրությունը ու պարզությունը: Օմորհակալ եմք Ձեզ մեր քրիստոնեական հավատքի պայծառ և կենդանի վկայության համար:

Վաղ ժամանակներից սկսյալ՝ արդեն Ռինգերորդ դարից ի վեր, հայ ուխտավորների քարավանները ժամանել էին Երուսաղեմ: Այս աղոթող ուխտավորներից շատերը հաստատվեցին Պաղեստինում: Այդ օրերի մասին է վկայում այն փաստը, որ այսօր շատ հայեր կրում են այնպիսի անուններ, որոնք տեղանուններ էին Պաղեստինում և Հորդանանում: Ս. Հերոնիմոսը 386 թվականի իր ճամփաներում արդեն հիշատակում է հայ ուխտավորների գալուստը: Այդ ժամանակվանից՝ սկսյալ՝ Երուսաղեմը Ս. Էջմիածնից հետո դարձավ հայերի հոգևոր կյանքի կիզակետը:

Այսօր ես ողջունում եմ Ձեզ Երուսաղեմից՝ մեր քրիստոնեական հավատքի մայրաքաղաքից: Ես ողջունում եմ Ձեզ արևելյան քաղաքից բացառապես քրիստոնեական ողջույնով. «Հրիստոս յարեաւ: Նա արդարեւ յարեաւ: Այլունեա»:

Ինձ թվում է, թե այսօր իմ տունն եմ եկել: Եվ իրապես ես իմ տանն եմ լինելով Նորին Սրբություն Գարեգին Ա-ի հետ: Քառասուններեք տարի առաջ Լիբանանի և Սիրիայի քրիստոնյա երիտասարդների միությունում ես հանդիպեցի Նորին Սրբության հետ: Եվ վարկենապես մենք դարձանք ընկերներ: Անգլո-հայկական երկկողմանի հարաբերությունների և էկումենիզմի սիսյուալ ճամփորդությունը մեզ համար առիթ հանդիսացավ Նորին Սրբության առաջնորդությունից սովորելու ընծայման կոչը, արիությունը, հավատարմությունը և հոգևորությունը: Եկեղեցիների միջին արևելյան խորհրդի նախագահությունում ես՝ իբրև պաշտոնակից, բացառիկ հնարավորություն ունեցա դասեր ստանալու մեր ընդհանուր հավատքի այս արևելյան հսկայից և նաև հայ ժառանգության հարստությունից:

Սիրեցյալներ, իբրև պաղեստինցի քրիստոնյաներ, մենք մխիթարվում և սփռփվում ենք Ձեր հավատքով. Ձեր ճվիրվածությամբ և Ձեր գոյատևմամբ: Փառք Աստծուն բարեբեր փոփոխությունների համար:

Անգլիկան օրացույցի մեջ մենք Ս. Ծննդյան տոներից ամսփյապես հետո ճշում ենք նաև հետևյալ տոները:

Առաջին. երբ Ս. Ծննդյան հանդեսներից, ուրախության և երաժշտությունից հետո մենք հիշում ենք Ս. Ստեփանոսի քարկոծումը և նահատակությունը: Հրիստոսի հրաշափառ Ծնունդը տոնելուց հետո մենք ամսփյապես կատարում ենք առաջին մարտիրոսի կյանքի և մահվամբ վկայության հիշատակը, որը մահվան պահին աղոթել է իրեն սպանողների համար: Գալով Հայաստան՝ որևէ մեկը չի կարող չկենտրոնանալ այստեղ ժամանակին տեղի ունեցած նահատակությունների վրա, և իմ այցելությանս ընթացքին ես նույնպես տեսա այս ամենը, ինչը կարող է արդյունք լինել միայն մեծ հավատքի:

Երկրորդ. ամսփյապես նահատակության և հալածիչների համար աղոթելու պատկերի վրա կենտրոնանալուց հետո մենք կատարում ենք «կյանքի» տոնակատարությունը, ինչպես ասվում է Հովհաննոս Ավետարանում: Սա ցույց է տալիս մեր հավատքի նպատակը, մարդիկ կարող են պարզապես կյանք ունենալ և կամ էլ կարող են չափազանց կատարյալ և բովանդակալից կյանք ունենալ, և հստակ է, որ սա է մեր առաքելության նպատակը: Բնորոշի ամերիկյան համալսարանը

Ռիմնադրողները չէին կարող ավելի հարմար առավածաշնչային սահմանում գտնել, քան այս տողերը՝ վերցված Ս. Հովհաննեսի Ավետարանից. «Ես եկա, որպեսզի նրանք կարենան կյանք ունենալ և ունենան այն առավելապես»:

Եվ երրորդ. Ս. Հովհաննեսի կողմից կյանքը հավաստելուց հետո մենք կենտրոնացնում ենք իրականության, չարչարանքների և տառապանքների վրա, որովհետև իրական կյանքում գոյություն ունեն տառապանք, հալածանք և մույնիսկ՝ մահ:

Մենք հիշում ենք այն երեխաներին, որոնք սպանվեցին Հերովդեսի հրամանով՝ Բեթղեմի կոտորածը: Մենք մույնպես հիշում ենք փախուստը դեպի Եգիպտոս, երբ Սուրբ Մանուկը դառնում է փախստական և ամուսն մտնում Եգիպտոսում: Երեմիա մարգարեն արդեն իսկ մախաբուշակել էր այդ ամուսնը. «Ռաքելը ողբում էր իր զավակների համար...»: Ս. Եմմդյանը հաջորդող այս իրադարձությունը ինքնին կոտորած էր, մեծ ցավի, տանջանքի և ողբի ժամանակահատված: Այս պարագային մենք տեսնում ենք մարդու ընդդիմությունը, որը փորձում է հակառակվել Աստծո կամքին... Իրեն պաղծատիցիներ, մենք էլ ձեզ մտան, եղբայրներ, մխիթարվում ենք այս հավատքով...

Աստծուն փառաբանելը և երկրի վրա՝ մարդկանց միջև բարի կամքի առաջացումը չի կարող հասանելի լինել առանց որոշակի չարչարանքի և տառապանքի... Անմեղ, բոլորովին հանցանք չունեցող երեխաները առաջինը վճարեցին մեզ համար: Խաղաղությունը թանկ գին ունի: Մենք գիտենք, որ ամբողջ աշխարհում մինչև այժմ յուրաքանչյուր բռնի ընթացքում մեկ միլիոն դոլար է ծախսվում զենքերի արտադրության համար: Ես հարց եմ տալիս, թե որքա՞ն պետք է վճարվի աշխարհի կողմից լիարժեք խաղաղության ձեռք բերման համար: Խաղաղությունը չափազանց թանկ է, այն ավելին արժե, քան պատերազմը, և վաղուց արդեն ժամանակն է, որ մենք սկսենք խաղաղության Ռիմնադրամի հանգանակությունը:

Գոյություն ունի մի համահայտ խոսք՝ հավանաբար վերցված արևելյան իմաստությունից, որ անգամ վատ իրավիճակից միշտ մի լավ բան է դուրս գալիս: Անկասկած, ներկայիս խաղաղության մղումը, թե՛ միջազգային, թե՛ շրջանային մակարդակներում, վկայությունն է այն բարիքի, որը պետք է առաջանա առկա վատ կացությունից: Խնդրում եմ աղոթե՛ք մեզ հետ խաղաղությանը արգելակող խոչընդոտների վերացման, ման Նրուսաղեմը բոլոր մարդկանց, ներառյալ պաղեստինցիների առջև բացելու համար:

«Երանի՛ խաղաղարարներին, որովհետև նրանք Աստծո որդիներ պիտի կոչվեն» /Մատթ., Ե, 9/:

Երանի՛ խաղաղարարներին... Խաղաղությունը հաստատված է: Այն մի ճանապարհ է, որին պետք է հետևել, քայլել նրանով, ինչպես Զաքարիան օրհնության մեջ է ասում. «Առաջնորդել մեր ոտքերը խնդաղության ճանապարհով»: Մեր Տիրոջ խաչը կատարյալ օրինակն է խաղաղությանը ծառայելու համար: Նա խաղաղությունը արախեց՝ իրեն զոհաբերելով խաչի վրա: Խաղաղությանը ծառայելն անհատների և ազգերի համար մոլ կյանք է նշանակում, որը մեզ բոլորիս արյունակից է դարձնում և միայն այդ կերպով թույլատրում ապրել երկրի երեսին. ո՛չ հրեա և ո՛չ էլ հեթանոս, ո՛չ հույն և ո՛չ էլ հռոմեացի, ո՛չ տղամարդ և ո՛չ էլ կին, այլ միայն սիրո ընտանիք՝ համաձայն Աստծո եզակի պատկերի՝ ի դեմս հայի, արաբի, հրեայի և այլն:

Քրիստոնյաները խաղաղասերներ են: Սա բոլոր ժամանակների կոչումն է

ճրագն Ռամար և Ռամապարիակ կոչում: Դա չի նշանակում, որ մենք խաղաղության Ռամար բանակություններ վարողներ կամ խաղաղությունը պահպանողներ ենք: Ահա սա է մեր կոչման ծառայությունը և մեր պատգամի էությունը, եթե մենք իրապես ցանկանում ենք ինչ-որ պատշաճ բան առաջարկել այսօրվա ժողովրդին: Այս ճանապարհին մենք պետք է խրախուսվենք մեր Ռայ ընկերակիցների պատմությամբ և վկայությամբ, թե ինչպես ճրագն ի վերջո Ռասան խաղաղության և ձեռք բերեցին իրենց օրինական ազատությունը:

Բոլորիս է Ռայտին, որ կործանարար ուժերը չեն կարող հետագայում կառուցողական արդյունքներ բերել: Այսպիսով, մենք աղաղակում ենք խաղաղության Ռամար: Մինչև որ խաղաղությունը չի պատրաստվել այս ճանապարհով, այն արդյունք կդառնա կյանքի և ճրագ արժեքների քացասական ձևափոխման: Խաղաղությունը պատերազմի քացակայությունն է, այն անձնական և հասարակական բարեկեցություն է, որը բխում է վստահությունից, սիրուց և Աստծուն հնազանդվելուց: Այն հռչակված է հրեշտակների կողմից Ծննդյան երգեցողության ժամանակ. «Փա՛ռք Աստծուն» բարձրանցներում, և երկրի վրա խաղաղություն՝ և հաշտություն՝ մարդկանց մեջ»:

Մենք պետք է անենք այս շատ դժվարին բանը. հավատանք, որ սիրո վերջերս ավելի խորն են, քան մարդկանց զենքերինը: Ուստի եկե՛ք միասին, բոլոր սահմաններից այն կողմ անցնելով, տոնենք մեր աշխարհի լուսաթացը, ուր խաղաղությունը ամբողջությամբ իշխում է ամեն ինչի վրա:

«Ընչաքաղցության և աղքատության խավարի մեջ եկեք բարձր պահենք արդարության ճրագը: Մեծակության և պաշտոնաթողության խավարի մեջ եկեք վառենք հույսի կրակը: Բռնության խավարում եկեք վառենք խաղաղության լույսը»:

«Ես քաղցած էի, և ինձ ուտելիք տվեցիք, ծարավ էի, և ինձ ջուր տվեցիք՝ խմելու. օտար էի, և ինձ ձեր մեջ առաք, մերկ էի, և ինձ հագցրիք, հիվանդ էի, և ինձ տեսնելու եկաք, բանտում էի, և ինձ մոտ եկաք» /Մատթ., ԻԵ, 35-36/:

«Տերը մեզ դարձնում է խաղաղության գործիքներ: Ուր որ ատելություն կա, եկեք սեր սերմանենք, ուր որ վիրավորանք կա՝ մերողություն, ուր որ անհավերաշխություն կա՝ միություն, ուր որ կասկած կա՝ հավատք, ուր որ հուսահատություն կա՝ հույս, ուր որ խավար կա՝ լույս, ուր որ տխրություն կա՝ ուրախություն» /վերագրվում է Ս. Ֆրանչեսկո Ասիզեցուն/:

Այդ իսկ պատճառով, լինենք Հայաստանում թե Պաղեստինում, եկե՛ք մեզ հանձնենք Աստծո ձեռքերին: Թող մեր ձեռքերը դառնան Նրա ձեռքերը՝ աշխատելով օր ու գիշեր և միշտ հուսալով. «Եղիցին կամք քո որպէս յերկինս եւ յերկրի»: Ամեն:

ՍԱՄԻՐ ՔԱՖԻԹԻ

*Երուսաղեմի Անգլիկան Եկեղեցու
տասներկուերորդ նախկոպոս*